

6. Վերջապէս կը տեսնենք հոն նաեւ «զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանչարացն», Այրարատայ դաշտաց ու գետոց ներդաշնակ միութեան ծնունդներ (Փրպ. 23), որոցմէ ոմանք անշուշտ առանձին կ'ուտուէին՝ զգացնելու համար իրենց «մեղրահամ քաղցրութիւնը». ինչպէս խաւարտը՝ որ Սաթրինկան տենչանքն էր (աստ, 142), հազարը (Եզն. 66) եւ ուրիշներ: Մինչդեռ ծնեբեկ (Խոր. 595), սամիթ (Մտթ. ԻԳ, 23), փեգենայ (Ղկ. ԺԱ, 42), ճակնդեղ (Ես. ԾԱ, 20), կաղամբ (Փաւս. 55), թաղթ, շաղգամ, ստեպղին, սպանախ եւ այլք եփուելով կ'ուտուէին (Գոշ՝ Առկ. 49, 51, 53, 55):

Ղազար՝ որ հայ կոչնոց ճոխութեան գըլխաւոր նկարագրիչն է, ոչ միայն ականատես էր անոնց, այլ երբեմն կենակից ալ եղած Մամիկոնեան պայազատաց (572) եւ անոնց հետ միասին վայելած. ուստի եւ իւր վկայութիւնը բացարձակապէս պատմական է: Աւելին կայ: Բնական էր՝ որ ուտելեաց զանազան տեսակներն արուեստով մը պատրաստուէին, ինչպէս ըսինք ձկանց համար, բաղադրուելով իրարու եւ արմտեաց հետ (աստ, 15), յօրինելու համար կերակրոց այլ եւ այլ տեսակներ, ինչպէս կ'ընէին նաեւ Հոովմայեցիք (Գար.